ՎՃՌԵՑ

1. «ԽԱՉ-ԱՐՄ» ՍՊ ընկերության և «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության տնօրենի 24.05.2023թ.-ի թիվ 9 ծանուցմամբ կայացված թիվ ԱՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-06/22-5 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակի:

Անվավեր ճանաչել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության տնօրենի 24.05.2023թ.-ի թիվ 9 ծանուցմամբ կայացված թիվ ԱՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-06/22-5 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը:

2. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինությունից հօգուտ «ԽԱՉ-ԱՐՄ» ՍՊ ընկերության և «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍՊ ընկերության բռնագանձել 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումը ներկայացնելու համար հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Մնացած մասով դատական ծախսերի բռնագանձման պահանջը մերժել:

3. Դատարանի 03.07.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝ արգելել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինությանը գանձել որպես որակավորման ապահովում տրված թիվ 2209344787 (009-983) և որպես պայմանագրի ապահովում տրված թիվ 2209344781 (009-982) երաշխիքները՝ պետք է պահպանել մինչև վճռի կատարումը, որից հետո այն՝ վերացնել:

4.Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5.Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակվելու պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ**